

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

_____2017 ԹՎԱԿԱՆ N _ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եվ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման հավելվածի 8.3 կետում «պատճենները» բառից հետո լրացնել <<, իսկ հանրակրթական և արտադարոցական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատությունների մասով՝ նշված տեղեկատվությունը տրամադրում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը՝ կցելով հաշվետու տարում հաստատված հանձնման-ընդունման ակտերի պատճենները, եթե սուբսիդիան հատկացվել է ամենամյա ընթացիկ գործունեությունը ծավալելու նպատակով:» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտությունը բխում է հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ թղթաբանությունը կրճատելու անհրաժեշտությունից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Մինչև 2016 թվականը հանրակրթական և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատությունները ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում էին ՀՀ պետական գնումների մասին օրենսդրության շրջանակում, այն դեպքում, այդ հաստատությունների ֆինանսավորման չափերի համար հիմք են ընդունվում իրավական այլ ակտերով /ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ կրթության և գիտության և ՀՀ ֆինանսների նախարարների ամենամյա համատեղ հրաման/ սահմանվող նորմատիվները /դասարան-կոմպլեկտ, աշակերտ/ուսուցիչ հարաբերակցություն և այլն/:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 1356-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 105-Ն որոշմամբ ուսուցման ծառայությունները դուրս եկան գնումների դաշտից /որի արդյունքում զգալիորեն պարզեցվեց ուսումնական հաստատություններին տրամադրվող գումարների հատկացման տեխնիկական գործընթացը/ և 2016 թվականից պայմանագրերը կնքվում են տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով:

Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՀ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների ել դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշման 8.3 կետի՝

պետական մարմինները յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում տեղեկատվություն տրամադրված սուբսիդիաների մասին ըստ շահառուների՝ կցելով տվյալ եռամսյակում հաստատված հանձնման-ընդունման ակտերի պատճենները, որի կազմումը դպրոցների մասով կրում է զուտ մեխանիկական բնույթ, սակայն աշխատատարության առումով զգալի ժամանակ է խլում:

Հանրակրթական և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ամենաէական ցուցանիշը սովորողների թիվն է, որը հաշվարկվում է ֆինանսական տարվա սկզբում պայմանագրերի կնքման նպատակով և ճշտվում է ուսումնական տարվա սկզբում՝ տարեվերջյան համաձայնագրերի կնքման նպատակով, որի արդյունքում փոփոխվում են ուսումնական հաստատությանը հատկացվող գումարները/, ուստի նպատակահարմար է հանրակրթական և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատությունների հետ հանձնման-ընդունման ակտը ստորագրել ֆինանսական տարվա ավարտից հետո:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Նվազեցնել ուսումնական հաստատությունների հետ իրականացվող թղթաբանությունը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները:

Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.

Հանրակրթական և արտաուսումնական դաստիարակություն իրականացնող հաստատությունների հետ ֆինանսական տարվա ավարտից հետո կկնքվի հանձնման-ընդունման ակտ, որով կամրագրվեն հաշվետու տարվա ընթացքում հաստատությունների կողմից մատուցված ծառայության ցուցանիշները:

Այլ տեղեկություններ.

Ուսումնական հաստատությունները հանձնում են հաշվետվություններ, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն և 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն հրամանների, կառավարման լիազորված մարմին են ներկայացնում իրենց տարեկան գործունեության նախահաշիվները, հաստիքացուցակները և տարիֆիկացիոն

ցուցակները: Հաստատությունները ներկայացնում են նաև սովորողների թվի վերաբերյալ տեղեկատվություն տարին երկու անգամ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1937-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

Չի առաջացնում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Չկան:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիքների

<p>Գերատեսչության անվանումը, գրության ստացման ամսաթիվը և համարը</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ</p>	<p>Նշումներ կատարման վերաբերյալ</p>
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 29.03.2017թ., թիվ 01/14/4893-17 գրություն</p>	<p>Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները՝ նախագծի 1-ին կետում «կետը» բառն անհրաժեշտ է փոխարինել «կետում» բառով, իսկ «բառերից» բառը՝ «բառից» բառով:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 21.03.2017թ., թիվ 01/83- 2/4919-17 գրություն</p>	<p>Անհրաժեշտ է «ուսումնական հաստատությունները նշված տեղեկատվությունը տրամադրում են հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը՝ կցելով տարում» բառերը փոխարինել «ուսումնական հաստատությունների մասով՝ նշված տեղեկատվությունը տրամադրում են մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը՝ կցելով հաշվետու տարում» բառերով:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն 09.02.2017թ. թիվ 1/07/176- 17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ մշակույթի նախարարություն 10.02.2017թ. թիվ 01/6/581-17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան:</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>

<p>Երևանի քաղաքապետարան 15.02.2017թ. թիվ 01/7-6472h գրություն</p>	<p>Հաշվի առնելով նախագծի կարգավորման նպատակը, առաջարկվել է հավելվածի 8.3-րդ կետը «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ հանրակրթական և արտադարձական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատությունները նշված տեղեկատվությունը տրամադրում են հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը՝ կցելով տվյալ տարում հաստատված հանձնման-ընդունման ակտերի պատճենները, եթե սուբսիդիան հատկացվել է ամենամյա ընթացիկ գործունեությունը ծավալելու նպատակով:» բառերը:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ Արագածոտնի մարզպետարան, 23.01.2017թ., թիվ 01/9/173-17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան 23.01.2017թ., թիվ 01/05.1/321-17; 24.01.2017., թիվ 01/03.1/349-17 գրություններ</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Տավուշի մարզպետարան 23.01.2017թ., թիվ 01/09.1- 2/210-17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Լոռու մարզպետարան 23.01.2017թ., թիվ 101/106.3.10/226-17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Շիրակի մարզպետարան 24.01.2017թ., թիվ 01/417-17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Սյունիքի մարզպետարան 25.01.2017թ., թիվ 01/04/333- 17 գրություն</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>
<p>ՀՀ Արարատի մարզպետարան 25.01.2017թ., թիվ 1/2/5/1/330-</p>	<p>Դիտողություններ կամ առաջարկություններ չկան</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>

17 գրություն		
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան 27.01.2017թ., թիվ 01/03/306-17 գրություն	Դիտողություններ կամ առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն:
ՀՀ Արմավիրի մարզպետարան 31.01.2017թ., թիվ 01/08.1/374-17 գրություն	Դիտողություններ կամ առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն:
ՀՀ Կոտայքի մարզպետարան 01.02.2017թ., թիվ 01/10.2/403-17 գրություն	Դիտողություններ կամ առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն: